№ 141 Օգոստոսի 14 (26) 1880 Օգոստոսի 14 (26) № 141

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու սկզբունքներ.—Ներքին տեսութիւն. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Հայկական խնդիր և Թիւրքիա. Մի քանի նկատողութիւններ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Կրօն և ազգութիւն.

ԵՐԿՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ամեն թշնամուն, ամեն հակառակ կուսակցութեանը, չը նայելով որ ատելով ատում էք նրան, կարելի է յարգել, եթէ նա յաջորդաբար է վարվում իր սկզբունքների մէջ, ինքն իրան չէ հակասում, ինքն իրան յարգում է։

Կրօնական սոված վէճի մէջ մեր հակառակորդները, որոնք ջանում են ժողովրդի առջև ձևանալ ազգի բոլոր առանձնայատկութիւնների պաշտողներ և պաշտպաններ, եթէ ճշմարիտ իրանց բոլոր ասածների, իրանց պաշտպանած սկզբունքների մէջ յաջորդաբար վարվէին, կօնսէկվէնտ լինէին, ինչքան էլ մարդը նրանց դիմադրէր ու հակառակէր, այնու ամենայնիւ ստիպված կը լինէր յարգել նրանց։

Բայց երբ որ մի ախոյեան, իր միտքը ապացուցանելու համար, իր հակառակորդին վնասելու համար, դիմում է ստութեան, բամբասանքին, սուտ լուրերին, ճշմարտութեան յեղաշրջելուն, երբ իր հակառակորդին յաղթել ուզենալու համար, պատրաստ է ամեն միջոցներով հերքել ոչ թէ միայն իր հակառակորդի ասածները և անպատճառ նրա բոլոր ասածներին հակառակն ասել, բայց և իրան թոյլ է տալիս իր թշնամուն իբր թէ յաղթելու համար, ուրանալ իր առաջ պաշտած սեփական պրինցիպներից գլխաւորները,—այն ժամանակ այլ ևս ոչինչ յարգանք չէ կարելի զգալ դէպի այդ տեսակ ախոյեանը։

Այն ժամանակ մարդը կատաղի ատելութեան տեղ ակամայ սկսում է զգալ ամենախոր արհամարհանք դէպի իր հակառակորդը։

Այսպէս և պատահել է մեզ հետ մեր հակառակորդների վերաբերութեամբ։

Մի ժամանակ մեր հակառակորդները հայոց ազգի օրգանական գոյութեան սկզբունքները համարում էին կրօն, հայրենիք ցեղ և լեզու, ի հարկէ կրօնին առաջին տեղը տալով այդ ազգային գործիչների շարքում։

Մենք պատմական կերպով ապացուցինք «Տարրական մտքեր» վերնագրով յօդուածների մէջ, բերելով օրինակներ ոչ թէ միայն հայոց, բայց և այլ ազգերի պատմութիւնից, որ ազգութիւնը շատ անգամ շարունակում էր գոյութիւն ունենալ, մինչև անգամ վերանորոգվում էր որպէս ազգութիւն, չը նայելով որ կրօնը մի կամ շատ անգամ փոխած լինէր, բայց միշտ կորչում էր որպէս ազգութիւն, երբ կորցնում էր հայրենիքն ու մայրենի լեզուն, չը նայելով որ կրօնը պահպանած էլ լինէր։

Ի՞նչ պէտք էր պատասխանել այդ ամենև ճշմարտութեանը։ Հայհոյանքները շատ համոզեցուցիչ չեն... Եւ ահա պէտք է յեղաշրջել ճշմարտութիւնը, պէտք է ասել, որ մենք քարոզում ենք կրօնափոխութիւն, թէև այդ բանը մեր մտքումն էլ չը կար։

Բայց այդ էլ բաւական չէ։ Երևի նոյն հակառակորդները շուտով հասկացան, որ այդ նենգաւոր միջոցով չեն կարող մոլորեցնել ամբոխը, որ արդէն մտաւորապէս բաւական արթնացած է և որ այնքան միամիտ չէ, որ նրան կարելի լինէր մոլորեցնել այդ տեսակ մանկական խաղով....

Եւ ահա այդ հակառակորդները նոր ընթացք են բռնում։ Նրանք սկսում են այրել ինչ որ պաշտում էին, ոչնչացնել ինչ որ տարիների ընթացքում անմատչելի, սուրբ էին համարում, ազգութեան գոյութեան համար գլխաւոր պրինցիպներ էին համարում։

Ի՞նչ աղաղակներ կարձակէին մեր հակառակորդները մի քանի տարի սրանից առաջ, եթէ մէկը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐՕՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

—

I

Ինչպէս յայտնի է եզուիտները աքսորվեցան Ֆրանսիայից։ Կարծեմ այդ աքսորված եզուիտներից մինը եկաւ այստեղ և այժմ կօջօրումն է ապրում....

Նորերումս տպվեցաւ «Մեղու Հայաստանի» լրագրում մի յօդուած Գ. Ե. ստորագրութեամբ, Կօջօրից գրած, որ կատարելապէս շնչում է եզուիտական ոգով։

«Մեղուի» խմբագրութեան կարծիքով այդ յօդուածը վերջնական վճիռ է տալիս այն պօլեմիկային, որ իբր թէ ծագել է «Մշակի» և «Մեղուի» մէջ կրօնափոխութեան խնդրի առիթով։

Նախ պէտք է ասենք, որ մենք ոչինչ պօլեմիկ չենք ունեցել և դիտաւորութիւն էլ չունենք բանալ «Մեղուի» հետ, ապարդիւն համարելով որ և է բանակռիւ մի լրագրի հետ, որ ազնիւ կերպով բանակռուել չը գիտէ, այլ միշտ սովորութիւն ունի յեղաշրջել ճշմարտութիւնը։ Երկրորդ՝ մեր յարուցած խնդիրը ազգային միութեան խնդիր էր և ոչ թէ կրօնական միութեան։ «Մշակը» մի խօսք անգամ ասած չէ կրօնափոխութեան մասին։

Մենք ասեցինք. ազգը բաղկացած է այլ և այլ դաւանութիւններից, այդ բոլոր դաւանութիւններին պատկանող հայերը պէտք է միանան ազգութեան մէջ։ Կրօնը մի ազգի, մի ցեղի, մի ազգութեան, որ ունի իր հայրենիքն ու մայրենի լեզուն, չէ կարող ընդհանուր ազգային յատկանիշ լինել. կրօնը մարդու անհատական անբռնաբարելի համոզմունքի արդիւնք է։ Մի ազգ կարող է ազգութիւն կոչվել երբ ունի ընդհանուր հայրենիք և ընդհանուր ազգային, մայրենի լեզու, չը նայելով որ այդ ազգի այլ և այլ անդամները այս կամ այն դաւանութեան են պատկանում։

Եւ մանաւանդ Թիւրքաց հայերի համար այս րոպէիս անհրաժեշտ էր հասկանալ այդ ճշմարտութիւնը, երբ Թիւրքաց Հայաստանը որպէս մի ամբողջ մարմին, պէտք է ստանայ բարենորոգումներ, ձգտում է ստանալ ինքնավարութիւն։

Թիւրքաց Հայաստանին խոստացված վերանորոգութիւնը չէ վերաբերվում միմիայն հայոց ազգի այն մասին, որ լուսաւորչական կրօն է դաւանում, այլ առհասարակ հայերին է վերաբերվում, ոչ թէ այս կամ այն երկրում ցրված հայերին, այլ Թիւրքիայի այն երկրին, որ հայերով է բնակեցրած, այսինքն Թիւրքաց Հայաստանին։ Եթէ այդպէս է, ժամանակ է մոռանալ լուսաւորչական, կաթօլիկ, բողոքական, յունադաւան ու մահմետական հայերի մէջ եղած խտրութիւնը և նրանց փոխադարձ ատելութիւնը, ժամանակ է վերջապէս որ լուսաւորչականները, այսինքն ազգի մեծամասնութիւնը, դադարեն իրանց այլակրօն եղբայրներին հալածելուց և ճանաչեն Հայաստանի բոլոր հայերին, ինչ կրօնի և պատկանէին նրանք, հաւասար քաղաքացիական իրաւունքը մասնակցելու իրանց դպրոցական և ազգային հաստատութիւնների մէջ։

Օրինակ, մինչև որ Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի մէջ, կամ Վանի, Էրզրումի և ուրիշ գաւառական ազգային հայոց ժողովների մէջ կընտրվեն միմիայն լուսաւորչական հայերը, իսկ ուրիշ կրօնների պատկանող հայերը իրանց ներկայացուցիչները չեն ունենայ,—այդ բոլոր ժողովները երբէք արժանի չեն լինի ազգային ժողովներ կոչվելու, այլ կը լինեն միմիայն կրօնական, կամ եկեղեցական ժողովներ, ազգի մի աղանդի ժողովներ։ Մինչև այն ժամանակ Եւրօպան կատարեալ իրաւունք կունենայ նայել հայերի վրա, որպէս մի աղանդի վրա, և ոչ թէ որպէս մի ամբողջ ազգութեան վրա.... Մի ազգ, որ ձգտում է մօտիկ ապագայում ինքնուրոյն վարչական և անտեսական կեանքով ապրելու իր հայրենիքի մէջ, մի ազգ, որ նայում է իր հայրենիքի վրա, որպէս մի ամբողջ մարմնի վրա, միթէ չը պէտք է նայի և ազգութիւնը կազմող բոլոր մասերի վրա, որպէս ամբողջութեան հետ մի ազգային մարմին կազմող ամբողջ կազմակերպութեան վրա։

Գտնվեցան մարդիկ, որոնք մեզ պատասխանեցին. «Ձեր մտքերը արդար են, բայց դեռ ևս տարաժամ են, թող ազգը առաջ ինքնավարութիւն ստանայ, յետոյ քարոզեցէք այդ մտքերը»։

Բայց մենք կասենք, որ ոչ մի ազգ արժանի չէ ինքնավարութիւն ստանալու, մինչև որ չը պատրաստվի այդ ինքնավարութեանը, մինչև որ չը կրթվի կրօնական համբերողութեան և քաղաքացիական հաւասարութեան ոգու մէջ, մինչև որ կատարելապէս չիրացնի այդ քաղաքական գաղափարները։

Բաղդաւորապէս Թիւրքիայի հայ մամուլը արձագանք տուեց մեր մտքերին,—և այդ էր, ի հարկէ, մեր գլխաւոր նպատակը։ Կ. Պօլսի հայոց մամուլը սկսեց նայել հայոց խնդրի վրա ոչ թէ կրօնական տեսակէտից, այլ ընդհանուր ազգային տեսակէտից, դուրս բերեց թւանշաններ Հայաստանի ազգաբնակութեան, որոնցից երևում է թէ հայը Հայաստանում, մեծամասնութիւն է կազմում։ Մեր թղթակից Հայկակն էլ մեզ գրում է թէ՝ «ժամանակ է նայել ազգի վրա ցեղական տեսակէտից և եթէ մենք ջոկենք այլադաւան հայերին լուսաւորչական հայերից, Եւրօպան շատ տխուր գաղափար պէտք է կազմէ մեր քաղաքագիտական հանճարի վրա, այն րոպէին, երբ Թիւրքաց Հայաստանի բովանդակ ազգը պէտք է ճանաչվի Եւրօպայից, որպէս ինքնավարութեան արժանի»։ Կ. Պօլսի «Մասիս» լրագիրը աւելի հեռու էլ գնաց, նա Հայաստանի ազգաբնակութեան վրա խօսելով, սկսեց գործածել ոչ թէ միայն հայ, այլ հայաստանցի անունը։

Մինչև որ մենք այդ մտքերը յայտնում էինք, գտնվեցան խաւարասէրներ, որոնց պարագլուխը պ. Պետրոս Սիմէօնեանն է, «Մեղուի» խմբագիրը, և որոնք իրանց յատուկ խարդախութեամբ, իսկոյն օգուտ քաղելով մեր յարուցած խնդրից, ուրիշ կերպարանք տուեցին այդ խնդրին, հաւատացնելով ժողովրդեան, թէ «Մշակը» քարոզում է հայերին կրօնափոխութիւն.... և ինչ կրօնափոխութիւն՝ դէպի բողոքականութիւնը։ «Մշակը» նոյնքան համակրութեամբ է խօսել և հայ-կաթօլիկների և հայ-մահմետականների և հայ-բողոքականների մասին։ Ինչից եզրափակեց «Մեղուի» խմբագիրը թէ մենք բողոքականութեանը աւելի ենք համակրում, —չը գիտենք։ Դիցուք այսպէս էլ լինէր. ազգին ինչ փոյթ մեր անձնական համակրութիւնը, մեր անձնական ճաշակը։ Մենք ազգի վրա սովորութիւն չունենք ազդել զգացմունքի միջոցով, այլ մտքի միջոցով, մենք ազգի վրա չենք բարձում մեր անձնական ճաշակը, մենք նրան յայտնում ենք անհերքելի, ժամանակակից գիտութիւնից դուրս եկած ճշմարտութիւնը, թէ ազգը միշտ թոյլ կը լինի, ազգութիւն չի կոչվի, այլ միայն կրօնական աղանդ կը լինի. քանի որ ինքն իր ձեռքով իրան կը վնասի, իր թիւը արուեստական կերպով կը պակասեցնի, կրօնամոլութիւնից դրդված կը վիժի իրանից ազգութեան ամբողջութիւնը կազմող այս կամ այն մասը, միայն այն պատճառով, որ այդ մասը ուրիշ կրօն է դաւանում, Աստուծուն ուրիշ կերպ է աղօթում, քան թէ մեծամասնութիւնը։ Ամեն հայը պարտաւոր է հայ լինել և եթէ նա, ինչ կրօնին և պատկանելով, իրան հայ չէ անուանում, նա ազգուրաց է, նա դաւաճան է իր ազգութեան։ Իսկ ինչ կրօնի կը պատկանի այդ հայը,—այդ մեզ փոյթ չէ. Նրա հաւատը ազատ է։

Մինչև որ ինքն Սիմէօնեանցը խարդախութեամբ աշխատում էր ջլատել մեր ջանքերը, որոնցով մենք կամենում էինք հաշտեցնել ազգի այլ և այլ երկպառակեալ մասերը, աշխատում էր գրգռել ամբոխի մոլեռանդութիւնը և մեր գործունէութիւնը յանդգնէր ասել թէ հայը հայրենիք չունի, թէ հայոց լեզուն չը կայ, ընդունակ չէ զարգացման, կամ մանկական հասակի մէջն է գտնվում…

Իսկ այդ վերջին ժամանակներ ի՞նչ ենք տեսնում. միմիայն «Մշակին» հակառակելու համար, մեր հակառակորդները այժմ պատրաստ են մերժել, ուրանալ իրանց առաջվայ ամենաթանգագին սկզբունքները….

Ո՛վ որ ուշադրութեամբ հետեւել է մեր հակառակորդների վերջին տարվայ գործունէութեանը, կը տեսնի, որ նրանք միմիայն անհաշտ ատելութենից դրդված դէպի «Մշակը» սկսում են մինչեւ անգամ այդպիսի մտքեր յայտնել. թէ հայը հայրենիք չունի, թէ հայոց ազգը չունի այն կուլտուրական ույժը, որ կլանի քիւրդերին կամ Փոքր-Ասիայի այլ աննշան ցեղերին, և ո՞վ գիտէ, գուցէ քիւրդերը ժամանակով կը հանդիսանան հայերից ուժեղ քաղաքակրթութեան մէջ, թէ խակապէս հայոց լեզու չը կայ և եթէ ամբողջ ազգը մաղես, հայերէն լաւ գիտցող հազիւ երկու երեք անձն միջից կը դուրս գան, թէ վերջապէս, հայոց լեզուն, թէև որպէս մայրենի լեզու, որպէս մանկավարժական միջոց հարկաւոր է հայ մանուկներին, բայց ինքն մանկական հասակի մէջ գտնվելով, պէտք է օգնութիւն խնդրի մի աւելի քաղաքակրթեալ, կատարելագործված օտար լեզուից, հայերին միտքը աւանդելու համար….

Եւ այդ բոլոր բաներից ոչինչ չէ նկատում հայ ընթերցողը, այնքան անսովոր է նա մտածել այն բանի վրա, որ կարդում է:

Երբ որ կատաղի թշնամութենից կուրացած հակառակորդը մինչեւ այդ աստիճան անյաջորդութեան է հասնում որ մինչեւ անգամ ինքն սկսում է ուրանալ իր առաջ պաշտած պրինցիպները, որոնց եթէ ուրիշը մի մասով անգամ դիպչէր, նա պատրաստ էր այդ ուրիշին խարոյկի վրա այրել, երբ որ, ասում ենք, հակառակորդը այդ տեսակ անամօթ անյաջորդութեան է հասնում, իր թշնամու դէմ ամեն կեղտոտ զէնք սուրբ համարելով,—այն ժամանակ մարդը ոչ թէ միայն յարգել չէ կարող իր հակառակորդին. բայց և ատել նրան անգամ չէ կարող, այլ միայն կարող է նրան արհամարհել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յուլիսի 10

Ընդունեցէք 41 ր. նուէր յօգուտ Հայաստանի սովատանջների, որը իմ նախկին ցուցակիս շարունակութիւնն է կազմում.

Կրպակներում տուփ ման ածելու գիտաւորութիւնը, որը ինձնից անկախ պատճառներով չը կարողացայ իրագործել, պատճառ դարձաւ սրա ուշացնելուն.

Զատկի տօնին այցելութիւններից օգուտ քաղելու համար տպել տուի քանի հատ ցուցակներ և յանձնեցի մի քանի յայտնի պարոնների, սեղանի վրա ունենալու համար, որի արդիւնքը շատ աննշան եղաւ.

Շատ փոքր ուշադրութիւն էին դարձրել. գոնէ իրենց խմած մի քանի բաժակ խմիչքների և քաղցրաւենիքի գինը ստորագրվէին, էլի մի միջակ գումար կը հաւաքվէր. Բայց փորը կուշտ մարդը չէ ուզում հասկանալ թէ ինչ է զգում քաղցածը.

Պարտք եմ համարում շնորհակալութիւն յայտնել պ. Ա. Գուլամիրեանցին, ցուցակների ձրի տպագրելու համար.

Ա. Բէջոսեան 5 ր., Ս. Ազիզեան Աղհամզալուեցի 3 ր., Կ. Առաքելով 2 ր., Խ. Խաչատրեան 2 ր., Գ. Արծրունի 2 ր. Հետեւեալ 23 անձինք մէկ, մէկ րուբլի՝ Հայ ոմն, փաշա խան, Ս. Գալստեան, Արամ. Վանօյ, Հայ ոմն, Հայ ոմն, Աւետիս, Արշակ, Սերգոյ, Մարտիրոս, Արտեմ, Վասակ Մագաթեան, Գ. Տէր-Դաւթեան, Մ. Շախմեան, Ս. Ղուկասեան, Գ. Ասլանեան, Յ. Գէորգեան, Խ. Տէր-Խաչատրեան, Ն. Սահփանեան, Ե. Աբրահամեան, Ներսէս բէկ Եղեազարեան և Іорданъ Маранджевъ յոյն. Գ. Յովհաննէսեան 70 կ., Բունեաթով 50 կ., Յ. Մելքոնեան 50 կ., Ս. Աւաքեան 75 կ., Մ. Գագեսեան 50 կ., Ղ. Ղազարեան 25 կ., Գ. Ազաջանով 20 կ., Փ. Օվանէսով 20 կ., Յ. Պապիկեան 40 կ. Ընդամենը 41 րուբլի.

Թոմաս Մեհերեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Тифл. Объявленія» լրագիրը կարծում է, որ Թիւրքիայի հայերը այն պատճառով զինւորված խմբեր կազմեցին և սկսեցին յարձակվել քիւրդերի դէմ, որ այդ վերջինները չեն թոյլ տալիս հայերին իրանց արտերը հնձել, որոնք այժմ շատ առատ են, անցած սարսափելի սովից յետոյ.

—

Օգոստոսի 18-ին, ինչպէս լսում ենք, լինելու է Արծրունու թատրոնում մի հայոց ներկայացումն և կօնցերտ յօգուտ մի հայ օրիորդի որ բժշկութիւն է սովորում Ս. Պետերբուրգում. Յոյս ունենք որ ԹԻՖԼԻՍԻ հայ հասարակութիւնը անտարբեր չի գտնվի դէպի այդ բարենպատակով տուած ներկայացումն. վերջապէս ժամանակ է մեզ համար սկսել համակրել մեր կանանց սեռի ուսման գործին, ժամանակ է հրաժարվել սպանիչ անտարբերութիւնից դէպի ամեն լուսաւոր հասարակական երեւոյթ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ ԵՒ ԹԻՒՐՔԻԱ

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ առաջնորդող յօդուածը:

Ներկայումս, երբ պետութիւնների մէջ կայացած համաձայնութիւնը յոյս է տալիս, որ Թիւրքիան կը խոնարհվի Եւրոպայի միացեալ կամքի առաջ, հարկաւոր է կենդանացնել Բերլինի դաշնագրի մնացած յօդուածները և ստիպել Բ. Դրանը, որ նա չուշացնի հանդիսաւոր կերպով իր վրա առած պարտաւորութիւնների կատարելը: Ինչպէս յայտնի է, Բերլինի դաշնագիրը առաջ բերեց և հայկական խնդիրը:

Դաշնագրի 61-դ յօդուածով Բ. Դուռը պարտաւորվեցաւ «առանց յետաձգելու» վերանորոգութիւններ մտցնել հայերով բնակեցրած երկիրների մէջ և ապահովել նրանց քիւրդերի, չէրքեզների և այլ վայրենիների յարձակմունքներից: Չը նայելով, որ երկու տարի անցել է այն ժամանակից, երբ Բ. Դուռը հանդիսաւոր կերպով իր վրա առաւ այդ պարտաւորութիւնները, նա ոչ թէ միայն չը մտցրեց վերանորոգութիւններ Հայաստանի մէջ, այլ ձգտում էր սաստկացնել Փոքր-Ասիայի քրիստոնեաների տանջանքները: Ամենայն օր Հայաստանից սրտաճմլիկ լուրեր են ստացվում այն բռնաբարութիւնների մասին, որ անում են վայրենիները քրիստոնեայ ազգաբնակութեան հետ: Թիւրքաց կառավարութիւնը ոչ թէ միայն ոչինչ միջոց չէ գործադրում անձնաւորութեան և գոյքի ապահովութեան վերականգման համար, այլ ընդհակառակը ուրախութեամբ կը յաւիտենականացնէր գործերի այդպիսի դրութիւնը:

Բոլոր այս ասածները հաստատվում են Բ. Դրան պատասխանով Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների ներկայացուցիչների գրութեան այն մասին, որ վերաբերում է Փոքր-Ասիայի վերանորոգութիւնների հարցին: Ինչպէս յայտնի է այդ պատասխանով Բ. Դուռը ամենից առաջ ձգտում է հաւատացնել Եւրոպային, որ Փոքր-Ասիայի քրիստոնեաների տանջանքների մասին տարածված բոլոր լուրերը անհիմն են: Այդ ստախօսութիւնը վրդովեցուցիչ է մանաւանդ այն պատճառով, որ քրդերի և չէրքեզների Հայաստանի մէջ ամենօրեայ անպատիժ կատարած բռնաբարութիւնների, կողոպուտների և սպանութիւնների մասին ստացված են ոչ

վնասակար ցոյց տալ հասարակութեանը,—այդ մեզ չէր զարմացնում. Մենք վաղուց ընտելացած էինք Սիմէօնեանցի այդ ազնիւ միջոցներին. Սիմէօնեանց իր լրագրով կարող է գոյութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ կը շողոքորթի ամբոխի ստոր զգացմունքներին, նրա սնոտիապաշտութիւններին, նրա կոյր մոլեռանդութեանը, նրա վատ հակումներին, նրա խաւարասիրութեանը….

Մենք հաւատացած ենք, որ նա ինքն էլ հասկանում է թէ շատ ազնիւ կերպով չէ վարվում,—բայց այսպէս վարվելը նրա նիւթական շահերն են պահանջում…. Ամբոխի մէջ դեռ կան բաւական տգէտներ, մոլեռանդներ, յիմարներ, խաւարասէրներ,—և ահա «Մեղուն» նրանց արձագանք, նրանց բերան, օրգան է դառնում, փոխադարձապէս նրանից էլ սնունդ տալով.

Մենք անձամբ ծանօթ էինք Մոսկվայում «Московск. Вѣд.» լրագրի խմբագիր, պ. Կատկովի հետ. Նա շատ լուսաւորված, ուսում առած մարդ է. Բայց ուրիշ բան է ազնւութիւնը. դա կրթութեան հետեւանք է. Մենք խօսում ենք լրագրական ազնւութեան մասին, մենք գործ չունինք Կատկովի մասնաւոր կեանքի ազնւութեան կամ անազնւութեան հետ. Կատկովը խօսելու ժամանակ, մի մասնաւոր շրջանի մէջ ի հարկէ չէր հերքի որ հրեան միւս մարդկանց պէս մարդ է, որ օրինակ, ռուսաստանցի հրեան ռուսաց պետութեան նոյնքան լաւ, օգտաւէտ և հաւատարիմ հպատակ է, որքան և ռուսաստանաբնակ ռուս քաղաքացին. Երկուսն էլ ռուս երկրի քաղաքացիներն են, այն զանազանութեամբ միայն, որ մէկը քրիստոնէական կրօնին է պատկանում, իսկ միւսը մովսիսական կրօնին. Բայց այսպէս խօսելուց յետոյ, նոյն պ. Կատկովը դուրս էր գալիս փողոց, անցնում էր օրինակ Օխոտնի Րեադ ասված բազարով և պատահմամբ լսում էր, ինչպէս ռամիկներից մինը անողորմ հայհոյում էր հրէային, նրան անիծված ջհուդ անուանելով,—և ահա նոյն Կատկով, մասնաւոր շրջանում իր ասած խօսքերը մոռանալով, միւս օր գրում էր իր լրագրի մէջ մի առաջնորդող յօդուած, որտեղ հայհոյում էր հրէաներին, ձայնակցում էր ռամիկին, յայտնում էր այն միտքը թէ հրէային չը պէտք է տալ հաւասար իրաւունքներ միւս քաղաքացիների հետ. Նա այդ անում էր հետեւեալ դատողութեան վրա հիմնվելով ամբոխի մեծամասնութիւնը դեռ տգէտ, խաւար և մոլեռանդ է, իմ ինչ գործն է նրան կրթել, նրան լուսաւորել. այդպիսով ես միայն թշնամիներ կունենամ և լրագիրս շատ քիչ բաժանորդներ կունենայ. թող բթամիտ ժողովուրդը բթամիտ մնայ, ինձ ինչ փոյթ…. Բայց շողոքորթելով ամբոխի ստոր ինստինկտներին, ձայնակցելով ռամկի կոյր մոլեռանդութեանը, ես շատ բաժանորդներ կունենամ, լրագիրս հատով էլ աւելի կը ծախվի, նա յաջողութիւններ էլ շատ կունենայ, որովհետեւ շատ տարածված թերթ կը լինի, ուրեմն ես շատ փող կունենամ.

Ահա ինչպէս են դատում Կատկովի պէս մարդիկ. «Ճշմարտութեան, մանաւանդ տարաժամ ճշմարտութեան յայտնելը նիւթական շահ չի տայ, իսկ ժողովրդի տգիտութեան շողոքորթելը շատ շահաւէտ բան է, ուրեմն ես ընտրում եմ երկրորդ ճանապարհը. Ինձ ինչ փոյթ ապագայ սերունդի անէծքը իմ յիշատակին, նրա զզւանքը իմ անունը բերանից արտասանելու ժամանակ….»

«Մեղուն» էլ մեր հայոց Կատկովն է. Նա էլ այսպէս ազնիւ է դատում. Իսկ Կատկովը իր կողմից, հետեւող է պ. պ. Գրէչի և Բուլգարինի, որոնք մի ժամանակ հրատարակում էին Ս. Պետերբուրգում «Сѣверная Пчела» (Հիւսիսային Մեղու) լրագիրը.

Մոլեռանդութեան գրգռելը, տգիտութեան շողոքորթելը, խաւարասիրութեան ձայնակցելը, հայհոյանք, բամբասանք, դաւաճանութիւն, կեղտ, աղբ, անձնական պատւին դիպչելը, ճշմարտութեան յեղաշրջելը, սուտ լուրեր հնարելը այն մարդու մասին, որ իրան թշնամի է,—ահա Սիմէօնեանցի, Կատկովի, Բուլգարինի և սրանց նման ստոր անձնաւորութիւնների, հասարակութեան այդ վնասակար առաջնորդների զէնքերը…. Եւ այդ բոլորը կատարվում է, որովհետեւ շահաւէտ է….

Ուրեմն Սիմէօնեանցի վարմունքը հասկանալի է.

Բայց ինչով բացատրել պ. Գ. Ե-ի յօդուածի չարժառիթը, որ նորերումս տպվեցաւ «Մեղու» № 57 մէջ,—դժուար է ասել.

II

Նախ պէտք է ծանօթացնեմ ընթերցողին թէ ով է Գ. Ե. որ կեղծեալ կերպով իր անուան և ազգանուան միայն սկզբնական տառերն է ստորագրել իր շնորհալի յօդուածի տակ. Դա ուսում առած մարդ է, համալսարանական է, Ս. Պետերբուրգի համալսարանի իրաւաբանութեան կանդիդատ է, և այլն և այլն….

Այդ տեսակ մարդ, ի հարկէ, չէ կարող գրել առանց իր գիտութիւնը ցոյց տալու…. Եւ ինչ գիտութիւն…. Բանասիրականի առաջին բաժնում ամեն բան կայ. եւրոպական երկիրների վրա ռուսական հարեւանցի հայեացք, էժան ազատամտութիւն, կրօնի և խղճի ազատութեան գաղափարների ծուռ ու սխալ մեկնութիւն, Բրէգլօի անգլիական պարլամենտում երդում չը տալու պատճառների բացատրութիւն և այլն….

Երկրորդ երեսից միայն Գ. Ե. սկսում է ինքնուրոյն մտքեր յայտնել….

Տեսէք ինչ գեղեցիկ մտքեր. «Եկեղեցին, ոչ մի եկեղեցին, ասում է Գ. Ե., չէ կարող արգելել կամ չարգելել կրօնի կամ խղճի ազատութեան սկզբունքը, որովհետեւ այդ սկզբունքների սըրբագործումը պատկանում է պետութեանը, ուրեմն չը պէտք է էլ դիմել մի եկեղեցուն, պահանջելով որ նա ազատամիտ լինի». Ցաւում ենք որ այլ և այլ պատճառներով երկար ու բարակ այդ մասին դատել միջոց չունինք. Բայց թող լաւ մտածի Գ. Ե., արդեօք նա ինքն չէ ամաչում որ այդ տեսակ մտքեր է յայտնում.

Թող այսքան բաւական լինի պ. Գ. Ե-ին, որ մենք չենք էլ դիմել երբէք եկեղեցուն, պահանջելով որ նա ազատամիտ և համբերող դառնայ, մենք խօսել ենք ժողովրդի հետ և նրան միշտ ուզեցել ենք համոզել որ համբերող, ազատամիտ լինի, թողնի ամեն մարդուն իր հաւատը և ամեն հայի վրա նայի հայութեան տեսակէտից.

«Մշակը» գուցէ ազգասիրական կէտից է նայում հարցի վրա, խոստովանում է Գ. Ե., բայց չէ նկատում որ պ. Ամիրխանեանի նպատակը ուրիշ է և դառնում է նրա գործիք.

Ուրեմն «Մշակը» համ ազգասիրական կէտից է նայում, համ էլ անզարգացած մանուկ է որ կուրօրէն ուրիշ մարդու ազդեցութեան տակ է ընկնում, այն էլ Ամիրխանեանցի պէս մի շահասէր մարդու գործիք է դառնում…. Չը գիտենք, թող այդ մասին դատէ ընթերցողը, ով աւելի շահասէր է. Ամիրխանեանցը, որ իր սխալ թէ ուղիղ համոզմունքի պատճառով և այդ համոզմունքի մէջ տոկուն կերպով մնալու պատճառով հայերի մէջ ապրելով զրկվում է վերջին կտոր հացից, ստիպված լինելով դէսից դէնից հաւաքված թարգմանութիւններով և գերմանական դպրոցի մէջ դասատւութեամբ ապրել, Ամիրխանեանց, որ ինչքան էլ հիմնաւոր կերպով գիտենար եօթ թէ ութ հին և նոր լեզուներ, հմուտ լինէր մանկավարժութեան, բայց բողոքական լինելով, հնար չունի ոչ մի հայոց դըպրոցի մէջ մտնել, և եթէ հայերից իր հացը ստանալու լինէր, պէտք է քաղցած մնայր, Ամիրխանեանցի պէս մարդն է շահասէր, թէ Գ. Ե-ի պէս համալսարանական մարդիկ, որոնք պատրաստ են ամեն տեսակ շահերի համար օրը հինգ անգամ ծախել իրանց համոզմունքը, ամենախոր կերպով գլուխ տալ, շողոքորթել ամեն մի բթամիտ հաստափորին, միայն թէ այս կամ այն բանկի ընդհանուր ժողովի ժամանակ ձայն ստանան բանկի խորհուրդի անդամ ընտրվելու համար, օտար ակցիաների վրա նստեն ու չաղվեն…. Այդ տեսակ մարդիկ, որոնց իւրաքանչիւր քայլը, խօսքը, գլուխ